

կարանէն (Թիւք, Իե, 2. Բ Օր. ԼԲ, 38) եւ առաքելական հրամանէն: Յազկերտ իւր զուռը գտուած հայ նախարարները կը փորձէր հրապուրել, որպէս զի գուցէ հաւանին ուտել « զմիս զոհեալ » . եւ զոր՝ կը յարէ պատմիչը՝ « ոչ էր երբեք օրէն ուտել քրիստոնէից » (Եղիշ. 17): Նմանապէս ուրացեալն Վասակ կը ջանար, կ'ըսէ, « կնքաւոր մարդկանն » բռնի կերցընել « միս յազածոյ » (նոյն, 53): Այս օրինակաց մէջ բռնադատ կրօնափոխութեան խնդիր կար, որով զոհեալ մսին մերժումը բնական էր: Բայց երբ հեթանոսաց հետ բարեկամարար պիտի ուտուէր նոյն մսէն, Ս. Հարք ձայնակից էին Պաւղոսի տեսութեանց հետ (աստ, 453): Եզնիկ՝ կերակրոց աղօթիւք սրբուելու առաքելական բացատրութիւնն առնելով նաեւ զոհելոց մասին, կ'ըսէ լայնախոհ մտօք. « Իբր ոչ եթէ պիղծ ինչ իցէ եւ սրբիցի. այլ որ նոցա (տկարամտաց) պիղծն կարծէր վասն զոհելոյն », աղօթքը զայն ալ կը սրբէ (284). որով եւ պիտի կարենար ուտուիլ: Բայց որովհետեւ փոքրոզի գայթակղողներն անպակաս պիտի լինէին միշտ, զարմանալի չէ որ սովորութիւնն ի սպառ խափանէր զոհելոց ճաշակումը թէ մեր եւ թէ Յունաց մէջ (Ոսկ. Թղթ. Ա, 96):